# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Նախագծին մասնակցում են՝ Ալլա Շարոյանցը, Եվա Հարությունյանը, Մարի Հարությունյանը և Նատալի Մնացականըանը

# Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցի

Եվա Հարությունյան

- Սուրբ Աստվածածին եկեղեցին հին մատուռ-եկեղեցիներից է: Կառուցվել է 1264 թվականին: Գտնվում է Երևանի  Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում: Միջնադարում Կաթողիկե եկեղեցին եռանավ բազիլիկ էր, կենտրոնական առանցքով, չորս պիլոններով, որոնց վրա երբևէ բարձրացել էր մեծ գմբեթ: Կառուցված էր տուֆաքարով: Մուտքեր ուներ հարավային և արևմտյան կողմերից: Կաթողիկե Սբ. Աստվածածինը իրենից ներկայացրել է ուղղանկյուն հատակագծով շինություն, որը ուներ չորս հաստ սյուներով եռանավ սրահ և արտաքին պատերին նստած երկթեք տանիքով թաղակապ ծածկ, հարավային դռան առջև՝ գավիթ, որը, ըստ արձանագրության, նորոգվել է 1860 թվականին: Վերջինս եկեղեցուն նվիրել է ձեռագրեր, թանկարժեք եկեղեցական իրեր: 1652 թվականին գրված:

Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցի



# Մալաթիայի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի

Նատալի Մնացականյան

Մալաթիայի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի

- Մալաթիայի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին կառուցվել էր 1996 թվականին: Կառուցումը սկսվել է 1991 թվականին և ավարտվել՝ 1998 թվականին: 1927 թ. խորհրդային Հայաստան եկան գաղթականներ Փոքր Հայքի (Մալաթիա) քաղաքից: Երևանի ծայրամասերից մեկում նրանք հիմնեցին թաղամաս, և անվանեցին Նոր Մալաթիա:
- •1960-ականներին Երևանի Նոր Մալաթիա թաղամասում հիմնվել է 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-այգի, որի հարևանությամբ տարիներ անց կառուցվեց նաև Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին, որը նման է պատմական Մելիտենեի գլխավոր եկեղեցուն:



# Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի

Մարի Հարությունյան

- Կառուցվել է 1996–2001 թվականներին: Ճարտարապետն է Ստեփան Քյուրքչյանը: Կառուցումը մտահղացել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը: 1989 թվականի հուլիսի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի և ճարտարապետական հանձնաժողովի համատեղ նիստում որոշվել է ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի՝ «... մայրաքաղաք Երևանում կառուցել մի մեծաշուք եկեղեցի հայկական դասական ճարտարապետական ոճի հիման վրա, որտեղ շուրջ երկու հազար հինգ հարյուր հավատացյալներ կարողանան միատեղ աղոթել»

Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի



# Սուրբ Երրորդություն եկեղեցի

Ալլա Շարոյանց

- Եկեղեցին կառուցվել է 2001-2005 թվականներին ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի նախագծով և ամերիկահայ բարերար Լուիզ Սիմոն Մանուկյանի ֆինանսական աջակցությամբ[1]: 2004 թ տեղի է ունեցել եկեղեցու խաչերի օծումը, իսկ 2005 թվականի նոյեմբերի 20-ին կատարվեց եկեղեցու օծման սրբազան արարողությունը[2][3]:
- Այսօր եկեղեցին ապրում է ակտիվ համայնքային կյանքով:

Սուրբ Երրորդություն եկեղեցի

